

-Երկու մեղք ունիմ: Առաջինը՝ Գոհարին հետ ծաղիկով գործուած ու երկրորդ մեղքս՝ Ծաղիկին հետ գոհարով գործուած: Ահա երկու մոմ կը վառեմ ու երկու կաթիլ արցունք կը հանեմ: Մոմերուս բոցով տաքցած արցունքներովս սրբէ մեղքերս, ո՛վ ծաղկագոհար Աստուածամայրս:

Իզմիրցին գիտէ ձեռքը ներքին գրպանը տանիլ իրեն, իրեններուն ու իրը համարածին համար: Ուրիշներուն համար ալ ձեռքը այդ գրպանը կը տանի՝ կոճկելու համար զայն, յանուն քաղաքավարութեան:

Իզմիրցին գիտէ իր հայ ըլլալը. բայց ի՞նչ հայ...: Վերի արտի հայերէն շատ աւելի վերերը բուսած հայ մը: Այնքան հեռուն ու բարձրը բուսած, որ լոյսը իր գտնուած տեղէն մինչեւ վերի կամ վարի արտի Յայերուն կը հասնի, հարիւր տարիէն: Մեզ նման սովորական Յայերէն որքան բարձր ըլլալը ըմբռնել տալու համար պիտի որակենք զինքը՝ վերին Երուսաղէմի Յայ:

Իզմիրցին գիտէ պաշտօնեայ ըլլալ: Իսկ երբ գործատեր ըլլայ, գիտէ ըսել իր հայ յաճախորդին.

-Յայերու հետ գործ մ'ունենար: Իզմիրցիի հետ, ինձի հետ ըրէ առուտուրդ:

Իզմիրցին ամենագետ է: Ամէն նիւթի մասին կը խօսի, որովհետեւ ամէն բան գիտէ: Մէկ բան չգիտեր. իր բան մը չգիտնալն է այդ: Իզմիրցիին պէս բանգետ մը, անշուշտ, այդ մէկն ալ կը սորվի:

Վերջին աղետներուն հետեւանքով բազմահազար հայորդիներ եղան հայրենագուրկ կամ առնուազն գրկուեցան իրենց ծննդավայրէն: Յայը եղաւ գաղթական: Մինակ Իզմիրցին է, որ հեռանալով իր ծննդավայրէն, տարագիր չեղաւ: Ընդհակառակն: Ան, Իզմիրէն հեռանալով, գնաց իր բուն հայրենիքը: Այսինքն՝ Եւրոպա: